ԱՐԱՐԱՏԲԱՆԿԸ, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը, Բանկային Կառավարման Դպրոցի հետ համատեղ կազմակերպում են գործարար կանանց վերապատրաստման սեմինար՝

# «Փոփոխությունների կառավարում» թեմայով

***Սեմինարը նախատեսված է*** կազմակերպությունների կին հիմնադիրների և գործադիր տնօրենների համար:

***Սեմինարը տեղի կունենա*** սույն թվականի ապրիլի 16-ին և 17-ին, ժամը 9:30-ից 17:30-ը, Մարիոթ հյուրանոցի Թագուհի Էրատո սրահում:

***Դիմելու ընթացակարգ*** ՝սեմինարին հայտագրվելու համար մինչև սույն թվականի ապրիլի 10-ը մասնակցել ցանկացողները կարող են իրենց տվյալներն ուղարկել info@bmschool.am հասցեին կամ զանգահարել 041 26 77 71 հեռախոսահամարին:

***Սեմինարի արժեքը*** ՝ 30 000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ:

***Սեմինարի թեմաներն են*** ՝

- Փոփոխությունների փուլ: Ինչպես զարգանալ փոփոխվող միջավայրում: Ինչպես հաջող կառավարել փոփոխությունները: Որոշումների մշակում և իրականացում:
- Կառավարման Ֆունկցիոնալ մոտեցում: Կառավարման PAEI դերը և նրանց միջև հակասությունները: Կառավարման ճիշտ և սխալ ոճերը:
- Ինչպես են կազմակերպությունները աճում, ծերանում և փակվում: Կազմակերպության կյանքի ցիկլը և առաջընթացի արագացումը կյանքի ցիկլի ուղիով (կորով): Կյանքի ցիկլի տարբեր փուլերում խնդիրների բնույթը և դրանց հետ աշխատանքը:
- Ինչ է պետք լավ որոշումներ իրականացնելու համար: Կառավարման էներգիայի աղբյուրները և կապիտալը: Օրվա արդյունքների ամփոփում:
- Իրականության ընկալում: Ընկերության ախտորոշում: Ում պետք է հրավիրել և ինչին ուշադրություն դարձնել:
- Ինչպես թիմով աշխատել խնդրի լուծման շուրջ: Խմբում որոշումների կայացման 8 քայլ:
- Տարրեր, որոնցից ձևավորվում է կազմակերպչական կառուցվածքը: Պարտականություններ, լիազորություններ և պարգևներ: Ինչպիսին պետք է լինի փոքր կազմակերպության կառուցվածքը:
- Փոխադարձ վստահության և հարգանքի ուժը:

- Ծրագրի արդյունքների ամփոփում:

Կիրականացվի նաև անհատական խորհրդատվություն:

***Աշխատանքային լեզուն*** ՝ռուսերեն:

***Սեմինարավար*** ՝ Վիկտորիա Կուչերչուկ (Adizes ինստիտուտի լավագույն բիզնես խորհրդատու):

***Սեմինարի մասնակիցները կստանան մասնակցության հավաստագիր:***

**Adizes՝ համագործակցային ղեկավարություն՝ բացառիկ արդյունքների հասնելու համար:**

Adizes-ը մարդկանց հնարավորություն է տալիս վերափոխել իրենց կազմակերպությունների կառավարումը և ստանալ արտակարգ, կայուն արդյունքներ: Adizes-ի աշխատանքը բոլոր հաճախորդների հետ առաջնորդվում է ուժեղ հավատով այն արժեքների նկատմամբ ինչպիսիք են՝

- ✓ փոխադարձ վստահություն և հարգանք
- ✓ համագործակցային փոփոխություն
- ✓ կառուցողական հակամարտություն
- ✓ լինել ղեկավարվող հաճախորդ
- ✓ լրացուցիչ թիմեր
- ✓ որոշիչ առաջնորդություն
- ✓ պարզություն
- ✓ համընդհանուր պարզններ

Կիրառելով այս արժեքները, Adizes-ը մարդկանց հնարավորություն է տալիս փոխելու իրենց կազմակերպության մշակույթը և ձեռք բերել մնայուն արդյունքներ: